ՌԱՄԱ մեթոդաբանություն

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի վրա ռիսկերը նվազեցնելու համար: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցություններն ու բարձրացնել ընդհանուր արտադրողականությունը: Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) համար ՌԱՄԱ մեթոդաբանությունը արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու ու էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև, ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ների շրջանում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«Մ. ՍԻՍԱԿՅԱՆ» ՍՊԸ - ՏԵՔՍՏԻԼ ԱՐՏԱԴՐԱՆՔ

Ընկերության մասին

Գտնվելու վայր՝ Սպիտակ
Արտահանման քվոտա (%)՝ 90
Հիմնադրման տարեթիվ՝ 2017
Աշխատակիցների քանակ՝ 41
Հիմնական արտադրատեսակներ՝ աշխատանքային համազգեստ, վերնազգեստ, զինվորական համազգեստ
Հիմնական շուկան՝ Հայաստան, Գերմանիա, Նիդեռլանդներ, Ֆրանսիա

՛«Մ. Սիսակյան» ՍՊԸ-ն կարի ընկերություն է, որը հիմնադրվել է 2017 թվականին, Լոռու մարզում: Ընկերությունը որպես ենթակապալառու մատուցում է կարի ծառայություններ խոշոր տեքստիլ արտադրողների համար, հետևաբար նրա արտադրանքը հիմնականում ուղղված է արտահանմանը: Թեև ձեռնարկությունն ինքը չունի որևէ միջազգային սերտիֆիկատ, ընկերության գլխավոր կապալառուներից մեկը՝ Գլորիան, ISO 9001 սերտիֆիկատի կրող է և Մ.Սիսակյանի ողջ տարածքում ներդրել է որակի ապահովման ստանդարտացված համակարգը: Ավելի էներգաարդյունավետ արտադրության հասնելու շարժառիթով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի շրջանակներում (2019-2024): Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2022-2023 թթ. իրականացված մոնիթորինգից հետո:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1
2 ՌԱՄԱ տարբերակ (կենտրոնացած ծախսերի կրճատման վրա)

2
Թափոնների կրճատում տարեկան 2 տոննայով

3
Էներգետիկ առումով ինքնաբավություն

4
Տարեկան 28 տոննա CO_2-ի կրճատում

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ-ի գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և բացահայտել ՌԱՄԱ-ի տարբերակներ, որոնցից ձեռնարկության կողմից առաջնահերթություն են տրվել երկուսին, որոնք միջին և ցածր ծախսատարության առաջարկություններ են:

ՌԱՄԱ տարբերակ 1: Ֆոտովոլտային (ՖՎ) արևային պանելների տեղադրում: Այս միջոցառումն իրենից ներկայացնում է 30-ից 50 կՎտժ անվանական հզորությամբ ՖՎ արևային համակարգի տեղադրում: Սա կսահմանափակի ընկերության կախվածությունը ազգային ցանցից և հնարավորություն կտա դառնալ էներգապես ինքնաբավ:

ՌԱՄԱ տարբերակ 2: Վերամշակված գործվածքների մնացորդների և սինտեփոնի վերաօգտագործում՝ նոր ապրանքներ ստեղծելու և դրանք շուկայում վաճառելու համար: Օգտագործելով գործվածքները և փափուկ մանրաթելերի մնացորդները՝ կարտադրվեն նոր ապրանքներ (օրինակ՝ գործվածքներ բարձերի և վերմակների համար, անկողնային պարագաներ, փափուկ խաղալիքների և խաղալիքների արտադրություն), ինչպես նաև կվերամշակվի արհեստական մանրաթելը, (որը կարող է հետագայում վաճառվել կահույք արտադրողներին): Թափոնների և աղտոտվածության ընդհանուր ցուցանիշը (որն առաջանում է ավելորդ գործվածքի այրման հետևանքով) զգալիորեն կնվազի:

ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Հիմնական ՌԱՄԱ գործողություններ

ՏԱՐԲԵՐԱԿ 1	Ֆոտովոլտային (ՖՎ) արևային պանելի տեղադրում
ՏԱՐԲԵՐԱԿ 2	Վերամշակված գործվածքների մնացորդների և սինտեփոնի վերաօգտագործում՝ նոր ապրանքներ ստեղծելու և դրանք շուկայում վաճառելու համար

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	ՆԵՐԴՐՈՒՄ(եվրո)	ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ (եվրո/տարի)	ՀԵՏԳՆՄԱՆ ԺԱՄԿԵՏ (տարի)
Տարբերակ 1:	25,000	5,800	5-6
Տարբերակ 2:	30	200	1

Ռեսուրսների խնայողություն

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	ՆՅՈՒԹԵՐ (%/ՏԱՐԻ)	ԷԼ. ՀՈՍԱՆՔ (%/ՏԱՐԻ)
Տարբերակ 1:	/	100%
Տարբերակ 2:	30%	/

Աղտոտվածության ընդհանուր նվազում

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	CO_2-EQ (Տ/ՏԱՐԻ)	ԹԱՓՈՆՆԵՐ (Տ/ՏԱՐԻ)
Ընդհանուր :	28	1-2

> Մեր ընկերությունը ցանկանում էր ունենալ նոր մոտեցումներ և նոր ուղեցույցներ՝ ծախսերը նվազեցնելու և արտադրողականությունը բարձրացնելու համար: ՌԱՄԱ ցուցադրական ծրագրի շնորհիվ մենք սովորեցինք, թե ինչպես նվազեցնել արտադրության ծախսերը, ինչպես նաև թափոնները և աղտոտվածությունը: Քանի որ մեր ընկերությունը ներդրումներ է կատարում սեփական ապրանքանիշի կառուցման, հանրային իրազեկվածության բարելավման և ապագա բանակցություններում ամուր դիրքեր ապահովելու համար, ՌԱՄԱ ծրագրի փորձը մեզ ոգեշնչել է նոր գաղափարներով հանդես գալ հետագա ՌԱՄԱ միջոցառումների իրականացման վերաբերյալ,- ասաց տնօրեն՝ պարոն Արթուր Դանիելյանը:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության մաս և իրականացվել է ՄԱԿԱԶԿ-ի կողմից: Այս համատեքստում **«Մ. Սիսակյան»-ը** միացել է «ՌԱՄԱ» ցուցադրական նախագծին, որը մշտադիտարկվելու է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև՝ ստուգելու առաջարկվող ՌԱՄԱ տարբերակների իրականացումը: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Լրացուցիչ մանրամասների համար այցելեք՝ **www.eu4environment.org**

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Դրա բովանդակությունը բացառապես ՄԱԿԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© – 2023 – ՄԱԿԱԶԿ: Բոլոր իրավունքները պաշտպանված են. Լիցենզավորված է Եվրամիությանը՝ համաձայն պայմանների:

ՄԱԿ-ի Արդյունաբերական Զարգացման Կազմակերպություն
տիկին Տատյանա Չերնյավսկայա
«ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
Էլ. հասցե: t.chernyavskaya@unido.org

Կոնտակտներ:
Տարածաշրջանային Բնապահպանական Կենտրոն Կովկաս
Հասցե: Հայկական ազգային գրասենյակ
Այգեստան փ.**7,** շենք **N 2, 0010,** Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374-115-75-148